Ընդհանուր տեսադաշտ

1. ***Ինչպիսի՞ն է Ձեր տեսակետը քաղաքի զարգացման հիմնական գերակայությունների մասին:***

Թբիլիսին FDI Magazine-ի վարկանիշում, ուղիղ արտասահմանյան ներդրումների ռազմավարության (Major European Cities in FDI strategy) կողմից Եվրոպայի նշանակալից քաղաքների տասնյակում է, իսկ բիզնեսի արտադրության ծախսումների (Major European Cities in Cost Effectiveness) կողմից՝ 2-րդ տեղում: Թբիլիսիում պետք է շարունակվի կյանքի բարելավման և սոցիալ-տնտեսական աճի աջակցության միջավայրի ձևավորումը, կայուն և անվտանգ զարգացման, սոցիալական կայունության անհրաժեշտ պայմանների ստեղծումը, որպեսզի քաղաքացիները ձեռք բերված առաջընթացը զգան սեփական ընտանիքներում: Դրա համար քաղաքապետարանը պետք է շարունակի ենթակառույցի զարգացումը և բնակչությանը մատակարարվող քաղաքային սերվիսների բարելավումը:

Թբիլիսիի հետագա զարգացման հետ եմ կապում նրա պատմական գործառույթի, տարբեր քաղաքակրթություններ միմյանց հետ կապող քաղաքի վերականգնումը: Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի տարածաշրջանների հատման կետում գտնվող Թբիլիսին ունի կարողություն լինելու մուլտիֆունկցիոնալ քաղաք, բազմակողմանի հանդիպումների վայր բիզնեսի, հանգստյան և զբոսաշրջության համար: Թբիլիսիի այս գործառույթը կապվում է մայրաքաղաքի զարգացման մեր գերակայություններին. յուրաքանչյուր բնակչի համար կյանքի բարձր մակարդակ, մնացած աշխարհի հետ սերտորեն կապված ժամանակակից կառավարում ունեցող քաղաքի կրթված, ակտիվ քաղաքացիական հասարակությամբ:

Զարգացում և տնտեսություն

2. ***Խնդրում ենք, համառոտ նկարագրեք քաղաքի երկարաժամկետ տնտեսական զարգացման Ձեր տեսակետը/պլանը (եթե այդպիսինն ունեք):***

Երկարաժամկետ տնտեսական զարգացման ռազմավարությունը նախատեսում է յուրաքանչյուր թբիլիսեցու ունակություն-սովորություններին և տարիքին համապատասխան աշխատատեղերի ստեղծում: Աշխատատեղերի բազմաթիվությունը պետք է ստեղծվի մասնավոր սեկտորում: Ճիշտ օրենքերը, կայուն և անվտանգ միջավայրը պետք է նպաստեն բիզնեսի զարգացմանը: Դրա հետ միասին երկարաժամկետ տնտեսական զարգացման համար կարևոր եմ համարում հարկերի կրճատումը, վառելանյութի և գազի վրա հարկերի հանումը, հարկային ներումը և մորատորիումը նոր կարգավորումների վրա: Մասնավոր սեկտորի զարգացման համար գերակայություն կլինի. ձեռնարկատիրության գաղափարի ժողովրդականացումը, բիզնես սկսելու և զարգացնելու տեղացի ցանկացողներին օգնությունը, ինչպես նաև նոր գործարարների գրավումը:

3. *Ձեր կարծիքով, որո՞նք են այն գլխավոր հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են Ձեր քաղաքի տնտեսական զարգացմանը:*

Քաղաքի տնտեսական զարգացմանը խոչընդոտում է այն ենթակառուցային նախագծերի կանգնեցնումը, որոնք կենտրոնական կառավարության քաղաքական որոշման պատճառով չեն ֆինանսավորվում: Խոչընդոտող գործոնների շրջանում է նաև ձեռնարկատիրության հնարավորություն ունեցող մարդկանց սակավությունը, բիզնես վարելու համար անհրաժեշտ, ժամանակակից պահանջներին համապատասխան որակավորման, մասնագիտության և ունակությունների-սովորությունների պակասը, ինչպես նաև շուկաներում գոյություն ունեցող իրավիճակի մասին տեղեկատվություն չունենալը:

4. *Ձեր կարծիքով, որո՞նք են Ձեր քաղաքի հիմնական հնարավորությունները/ գերակայությունները, որոնք կձգտեք կիրառել քաղաքի տնտեսական և քաղաքային զարգացման հասնելու համար*::

Հիմնական ենթակառույցի, երկրի որակյալ կադրերի և կապիտալի կենտրոնացումը մայրաքաղաքում, նրա աշխարհագրական դիրքը, գործառույթը և դերը տարածաշրջանում հնարավորություն է տալիս Թբիլիսիի քաղաքապետարանին, խրախուսելու գործունեության տարբեր ոլորտների զարգացումը, նպաստելու աշխատատեղերի ստեղծմանը, բարելավելու առողջապահության և կրթության որակը ոչ միայն քաղաքում, այլև երկրի մասշտաբով: Ավելին, Թբիլիսին կարող է օգնել երկրի այլ մունիցիպալիտետներին առավելագույնս կիրառելու իրենց հնարավորությունները:

5. *Ինչպիսի՞ն են Ձեր բյուջետային գերակայությունները: Խնդրում ենք համառոտ մեկնաբանեք Ձեր բյուջետային քաղաքականությունը:*

Ճանապարհային և տրանսպորտային ենթակառույցի զարգացման, համատիրությունների ծրագրերի հետ միասին, քաղաքի բյուջեի գերակայությունների շրջանում կլինեն էժան ջեռուցման և տաք ջրի նախագծերը, սոցիալապես անպաշտպան ուսանողների ուսման վարձի լրիվ մարումը, դպրոցի աշակերտների, ուսանողների, կենսաթոշակառուների, սոցիալապես անպաշտպան քաղաքացիների, մանկավարժների համար հասարակական տրանսպորտով անվճար օգտվելը:

6. *Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի բիզնես և կոմերցիոն ենթակառույցի բարելավմանը, ներդրումների գրավմանը նպաստելու համար:*

Այս ուղղությամբ հաջողությունը նշանակալիորեն կապված է կենտրոնական և տեղական իշխանությունների կողմից կատարվելիք այնպիսի ճիշտ քայլերից, ինչպիսիք են հարկերի կրճատումը, վառելքից և գազից ակցիզային հարկերի հանումը, բիզնեսի հետ կապված սխալների և խախտումների ապաքրեականացումը, հարկային ներումը, մորատորիումը նոր կարգավորումների վրա: Այս ամենը բիզնեսի համար կստեղծի խաղաղ և կանխագուշակելի միջավայր, ինչը, իր հերթին, կպայմանավորի տնտեսության առաջընթացը, բիզնեսի զարգացումը և աշխատատեղերի ստեղծումը:

Քաղաքային զարգացում/քաղաքի նախագծում /բնակարանաշինություն

7. ***Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքացիներին ավելի լավ բնակության պայմաններ ստեղծելու համար:***

Մեր զարգացման տեսակետը և տնտեսական քաղաքականությունը ապահովում են բիզնեսի զարգացում, աշխատատեղերի ստեղծում, զբաղվածություն, գործազրկության կրճատում և երկրի զարգացմամբ ձեռք բերված առաջընթացը կարտացոլվի յուրաքանչյուր քաղաքացու և ընտանիքի բարօրության վրա:

8. ***Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքի փողոցների մաքրությունը բարելավելու համար:***

Արմատապես փոխվեց բարեկարգման որակը քաղաքում: Բարեփոխում սկսելու ժամանակ գոյություն ունեցող կոռուպցիոն համակարգի վերացման, մնացորդների հավաքում-տեղափոխման համակարգի ստեղծման և այլ փոփոխություններից հետո քաղաքը կկանգնի նոր մարտահրավերների առջև: Ինչպես բոլոր ժամանակակից քաղաքներում, Թբիլիսիում էլ դրված է մնացորդների քանակի կրճատման հարցը: Հարկավոր է մնացորդներ առաջացնող տեղերում կարգավորել բաժանման և դրանց հետագա վերամշակման հարցը:

Ենթակառույց և տրանսպորտ

9. ***Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել հասարակական տրանսպորտի համակարգի բարելավման համար:***

Այս ոլորտում մշտական գերակայություն են մնում. ավտոկայանի լրիվ նորացումը և քաղաքը ժամանակակից բարեհարմար, էկոլոգիապես մաքուր, սահմանափակ կարողություններով անձանց հարմարեցված, մատչելի հասարակական տրանսպորով ապահովումը, մետրոպոլիտենի հետագա զարգացումը և ժամանակակից տրամվայի նախագծի

իրականացումը, Թբիլիսիի մասշտաբով ճոպանուղիների, որպես հասարակական տրանսպորտի սարքավորումը:

Դպրոցի աշակերտների, ուսանողների, կենսաթոշակառուների, սոցիալապես անպաշտպան քաղաքացիների, մանկավարժների համար նախատեսված է հասարակական տրանսպորտից անվճար օգտվել:

10. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքում ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման համար:

Պետք է շարունակվի Թբիլիսիի քաղաքապետարանի կողմից վերջին տարիների ընթացքում անցկացված քաղաքականությունը, մասնավորապես. (1) ճանապարհային երթևեկության ապաբեռնաթափման էստակադների շինարարությունը, (2) ճանապարհածածկույթի բարելավումը, (3) Ավտոկայանման կարգավորումը, (4)Երթևեկությունը սահմանազատող գծերի սարքավորումը, ճանապարհային նշանների և լուսանշանների համակարգի կատարելագործումը:

11. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք սահմանափակ կարողություններով անձանց քաղաքում տեղաշարժի հնարավորությունների բարելավման համար:

Բոլոր հանրային հիմնարկները, կրթական և բժշկական հիմնարկությունները, հասարակական տրանսպորտը հարմարեցված պետք է լինի ՍԿ անձանց կարիքներին:

Մշակույթ և կրթություն

12. Ի՞նչ ծրագրեր կիրականացնեք մշակութային կյանքի բարելավման համար::

Մշակույթի ոլորտում գերակայությունը մշակութային ժառանգության հուշարձանների պահպանման,/խնամքին,/վերականգնմանը և ժողովրդականացմանը պետք է շնորհվի: Պատմական ժառանգության պահպանման և ներկայացմանը զուգահեռ կարևոր է ժամանակակից արվեստի զարգացումը, գրադարանների արդիականացումը, թանգարանների վերականգնումը-վերափոխումը ժամանակակից գրավիչ տարածքի:

13. Ձեր իրավասության սահմաններում, ինչպե՞ս կգործեք կրթության մատչելիության և որակի բարելավման նպատակով:

Բոլոր երիտասարդներին պետք է տրվի կրթություն ստանալու հավասար հնարավորություն: Թբիլիսիի քաղաքապետարանը սոցիալապես անպաշտպան ուսանողների համալսարանում

սովորելու վարձը լրիվությամբ կմարի: Կարևոր է նաև, որ քաղաքապետարանը ֆինանսավորի արտասահմանի առաջատար ուսումնական հաստատություններում առաջադեմ ուսանողներին ուրբանիստիկայի, ճարտարապետության, շինարարության և այլ մասնագիտություններով ուսումի շարունակումը: Կրթության մատչելիությունը մեծացնելու նպատակով անհրաժեշտ է Թբիլիսիում գրանցված սոցիալապես անպաշտպան ուսանողներին տանը ապահովել անվճար համացանցով:

Անվտանգություն և հանցագործություն

14. Ձեր իրավասության շրջանակներում, ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք հանցագործության դեմ պայքարի, հանցանքի կանխարգելման համար:

Այս ոլորտում տեղական մունիցիպալիտետների գործառույթը պետք է լինի երիտասարդության շրջանում առողջ կենսակերպի, մարզական, մշակութային և կրթական ծրագրերի ժողովրդականացում/աջակցությունը:

Առողջապահություն և սոցիալական քաղաքականություն

15. Ինչպիսի՞ն կլինի քաղաքում Ձեր սոցիալական քաղաքականությունը և ի՞նչ սոցիալական ծրագրերի իրականացման համար կհոգաք:

Սոցիալական քաղաքականությունը պետք է նպաստի աղքատության հաղթահարմանը, կենսամակարդակի բարելավմանը և ուժեղ միջին շերտի ձևավորմանը: Դրա համար անհրաժեշտ է հարկերի կրճատում և աշխատատեղերի ստեղծման համար լավագույն միջավայրի ստեղծում, ինչպես նաև սոցիալական պաշտպանության համակարգի այնպիսի զարգացում, որպեսզի այն էլ ավելի լավ լինի կողմնորոշված աղքատության սահմանից ներքև գտնվող ընտանիքների նպատակային սոցիալական օգնության ապահովման համար:

16. Ի՞նչ միջոցառումներ կիրականացնեք Ձեր քաղաքում առողջապահության ընդհանուր ցուցիչների բարելավման համար:

Բնակչության առողջության իրավիճակի ցուցիչների բարելավման համար անհրաժեշտ է հասարակական առողջապահության համակարգը դառնա գերակայող, չխնայենք ջանքերը առողջ կենսակերպի արմատավորման համար: Առաջնային առողջապահությանը և ընտանիքի բժշկի ինստիտուտին ավելի շատ պետք է աջակցենք ֆինանսապես և ավելի լայնորեն պետք է ընդգրկվենք ապահովագրական համակարգերում:

Անհրաժեշտ է, որ ապահովագրական փաթեթները պարունակեն դեղորայքի ընդլայնված ցանկ, որը սոցիալապես անպաշտպան բնակչությանը կհատուցվի պետության կողմից, իսկ նշանակալի զեղչերից կօգտվեն տարբեր խմբերի ներկայացուցիչները:

17. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում անօթևանների սոցիալական պայմանները բարելավելու համար:

Ձրի ճաշարանների Թբիլիսիի քաղաքապետարանի արմատավորած ծրագիրը որոշակիորեն թեթևացրեց քաղաքի սոցիալական բեռը, թերևս անհրաժեշտ է լրացուցիչ միջոցառումների անցկացում, որպեսզի անօթևանների սոցիալական պայմանները բարելավվեն: Մեր բյուջետային գերակայությունները, առանձնապես, հասարակական տրանսպորտի ոլորտում (տես՝ հարց 5.), ճիշտ սրա վրա է կողմնորոշված:

Էկոլոգիա, ռեկրեացիա և սպորտ

18. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավման համար:

Տրամվայի և ճոպանային տրանսպորտի նախագծերը ուղղված են քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավման կողմը: Բյուջեից նշանակալից գումարներ պետք է հատկացվեն նոր կանաչ գոտիների ստեղծման և զարգացման համար: Ինչպես նաև այս ուղղությամբ նշանակալի քայլ է հելիո համակարգի ջեռուցման արմատավորումը:

19. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքում ռեկրեացիոն գոտիների, զբոսայգիների ընդարձակման և զարգացման համար:

Թբիլիսին ունի խոշոր ռեսուրս լինելու կանաչ քաղաք: Ամեն թաղամասում պետք է շարունակվի պուրակների և այգիների ստեղծումը, որտեղ ընտանիքների, երեխաների, ընկերների հետ միասին կհանգստանանք և կլիցքաթափվենք:

20. Ի՞նչ մտադրություններ ունեք սպորտի և առողջ կենսակերպի զարգացման և մարզական-ռեկրեացիոն ենթակառույցի բարելավման համար:

Քաղաքում մարզական և առողջ կյանքի զարգացմանը նշանակալիորեն կնպաստի 2015 թվականին Թբիլիսիում երիտասարդական օլիմպիադայի և ֆուտբոլի Եվրոպայի սուպերգավաթի անցկացումը, ինչը ենթադրում է համապատասխան ենթակառույցի շինարարություն/բարեկարգում:

Թբիլիսի

21. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում քաղաքում անցկացնել հետիոտնի տեղաշարժի անվտանգությունը և հարմարավետությունը բարելավելու համար:

Ժամանակակից եվրոպական քաղաքների ենթակառուցային զարգացումը կողմնորոշված է ոտքով զբոսնող մարդկանց վրա: Թբիլիսին էլ հետիոտն զբոսնողների քաղաքի պետք է վերածենք: Այսօր Թբիլիսիում 30 000 ավտոկայանման տեղ է և դրա մեծամասնությունը գրավում է փողոցի կամ մայթի մի մասը: Սա մեծ հիմնախնդիր է: Հարկավոր է մայթերը ազատել մեքենաներից, ինչը նշանակում է 70 000 նոր ավտոմեքենայի համար սարքավորել կայանման տեղ: Շինարարության թույլտվություն տալիս պետք է խստանա համապատասխան քանակի ավտոմեքեայի համար կայանատեղի պահանջը: Զուգահեռաբար, քաղաքում կստեղծվեն հեծանվային արահետներ և կանցկացվեն միջոցառումներ հեծանվով երթևեկությունը պարզեցնելու համար:

22. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում ավտոմոբիլային երթևեկության կարգավորման և ճանապարհային իցանների կրճատման նպատակով:

Դրա համար հարկավոր է այն ենթակառուցային նախագծերը շարունակել, որոնք կենտրոնական կառավարության քաղաքական որոշման պատճառով կանգնեցվեցին՝ ճանապարհային երթևեկությունը թեթևացնող էստակադների շինարարությունը, ճանապարհածածկույթի բարելավումը, ավտոկայանումների կարգավորումը, երթևեկությունը բաժանող գծերի սարքավորումը, ճանապարհային նշանների և լուսանշանների համակարգի կատարելագործումը:
Միևնույն ժամանակ, քաղաքների զարգացման ժամանակակից ռազմավարությունը կողմնորոշված է ոտքով քայլող քաղաքացիների վրա, նրանց պետք է սպասարկի նաև մեքենան, ավտոբուսը, ճանապարհային կամ այլ ենթակառույց: Ոտքով քայլող մարդ նշանակում է. հասարակական տրանսպորտի, զբոսանքի և ռեկրեացիոն գոտիների, մայթերի և ոտքով անցնելու տարածքների ակտիվ սպասարկում: Որքան ավելի բարեհարմար է զգում իրեն ոտքով զբոսնող քաղաքացին, այնքան ավելի ծանրաբեռնված է քաղաքը: Իսկ սա ավտոմոբիլային երթևեկությանն էլ ավելի կարգավորված է դարձնում:

23. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել անտեր կենդանիների հիմնախնդրի կարգավորման համար:

Այս ուղղությամբ քաղաքի քաղաքականությունը պետք է հիմնվի 2 հիմնական սկզբունքի վրա. Կենդանիների հետ հումանիտար վերաբերմունք և քաղաքացիների անվտանգություն:

Անտեր կենդանիներին խնամելու համար գոյություն ունեցող ժամանակակից ապաստարանները այս երկու սկզբունքները համադրելու հնարավորություն է տալիս:

24. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել անավարտ շինարարությունների, վթարային շինությունների հիմնախնդիրների կարգավորման համար:

Չավարտված շինարարությունների և վթարային շինությունների հիմնախնդիրը հիմնականում կապված է այն բանի հետ, որ դրանց ավարտման-վերականգնման համար հարկավոր ներդրումների ծավալը անցնում է դրանց արժեքից: Այսպիսի շինությունների տերերի տարրական բնակարանային պայմանների և անվտանգության հարցերի լուծման հետ միասին, գործունեությունը ուղղված կլինի կոնկրետ թաղամասերի զարգացման վրա, որպեսզի աճի այս շինությունների շուկայական արժեքը և դրանք հետաքրքիր դառնան ներդնողի համար:

25. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի պատմական արտաքին տեսքը պահպանելու համար:

Թբիլիսիի համար կարևոր է պատմական արտաքին տեսքի պահպանումը, դրա համար առավելագույնս զգույշ պետք է մոտենանք վերականգնողական աշխատանքների անցկացմանը, որպեսզի չփոփոխենք հին շենքերի նախնական տեսքը և պահպանենք դրանք քանդելուց:

26. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Թբիլիսիի շրջանցիկ երկաթգծի շինարարության հարցին:

Որոշումը պետք է ընդունված լինի մի կողմից բնական լանդշաֆտի, իսկ մյուս կողմից մասնավոր սեփականության պաշտպանության հաշվառումով: Կարևոր է, որ որոշում ընդունելու գործընթացը, ընդհանուր առմամբ և առանձնապես այս դեպքում ընթանա լայն հասարակական ընդգրկվածությամբ և թափանցիկ:

27. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Վակեի զբոսայգու մոտակայքում պլանավորված հյուրանոցի շինարարության հարցին:

Որոշումը պետք է ընդունված լինի մի կողմից բնական լանդշաֆտի, իսկ մյուս կողմից մասնավոր սեփականության պաշտպանության հաշվառումով: Կարևոր է, որ որոշում ընդունելու գործընթացը, ընդհանուր առմամբ և առանձնապես այս դեպքում ընթանա լայն հասարակական ընդգրկվածությամբ և թափանցիկ: